1	Վիկտոր Ջլավյան Ռաֆիկի Ա/Ձ	Ք. Երևան, Ազատամարտիկների փ. S 71/2
2	Մեդտեխսերվիս ՍՊԸ	Ք. Երևան, Լեո 12 հեռ. 010 53 36 30
3	Նատալի Ֆարմ ՍՊԸ	ք. Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2, հեռ. 010 74 42 12
4	Խաչպար ՍՊԸ	Ք. Երևան Միքայելյան 76/2 հեռ. 091 45 90 45
5	Լեյկոալեքս ՍՊԸ	Ք. Արմավիր, Սայաթ-Նովա փ. 33 հեռ. 010 35 03 03

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված մյուս կազմակերպությունների կողմից գնային առաջարկի ծրարներ չեն ստացվել:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

1.2. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության, ինչպես նաև հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Բոլոր ընկերությունների ներկայացրած ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և նրանցում առկա են հրավերով/ծանուցմամբ/ պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ դիմում շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու, հայտարարություն շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, հայտարարություն տեխնիկական միջոցների մասին, հայտարարություն ֆինանսական միջոցների մասին, հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, գնային առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Փաստաթղթերը կազմված են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

1.3. Գնահատող հանձնաժողովի նախագահը և բոլոր անդամները հավաստում են, որ հիշյալ ընթացակարգի մասնակիցների հետ չունեն շահերի բախում:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

2. Մասնակիցների գնային առաջարկները

(Ռ. Մանուկյան)

<<ՇՄԳՇԲՕԿ-ՇՀԱՊՁԲ-16/16-1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով ընթացակարգի մասնակից կազմակերպությունների գնային առաջարկները ներկայացվում են կից հավելված 1-ով/գնահատման թերթիկ/:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ՝ 0

3. 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում

(Ռ. Մանուկյան)

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝